

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

I. Տեղեկատվություն առաջադրանքի վերաբերյալ

Աշխատանքի նկարագրությունը՝ Մասնագիտական ծառայությունների մատուցում՝
ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի շենքի էներգաարդյունավետության բարձրացման և վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում 100 օրացույցային օր
Տևողությունը՝
Ծրագիրը՝ «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱՁԾ-ԿԿՀ ծրագիր
Վայրը՝ Երևան, Հայաստանի Հանրապետություն

1. Ընդհանուր տեղեկություններ

«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱՁԾ-ԿԿՀ ծրագիրը աջակցում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին, իրականացնելով տեսչական մարմնի շենքի վերանորոգման և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումների բարձրացման աշխատանքները:

2. Տեղեկություններ ոլորտի մասին

Ընդհանուր ակնարկ

Հայաստանի 2014-2025 թվականների զարգացման ռազմավարության համաձայն՝ բոլոր ոլորտներում էԱ խթանումը Հայաստանի հիմնական առաջնահերթություններից է, և առկա օրենսդրությունը նպաստում է էներգախնայողությանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Հայաստանը համեմատաբար աղքատ է բնական ռեսուրսներից և իր էներգետիկ կարիքների բավարարման համար մեծ ծավալով էներգակիրներ է ներկրում: Ներկրվող էներգակիրներից նման կախվածությունը լուրջ ազդեցություն է թողնում երկրի արտաքին առևտրի ցուցանիշների վրա և վտանգ է ներկայացնում մակրոտնտեսական կայունության համար: Հայաստանի քաղաքները, ներառյալ մայրաքաղաք Երևանը, միացել են քաղաքապետերի դաշնագրին և պարտավորություններ ստանձնել մինչև 2020 թվական 20%-ով նվազեցնել էներգիայի սպառման ծավալները: ԷԱ բարելավումները կօգնեն

քաղաքապետարաններին նվազեցնել էներգիայի սպառման հետ կապված ծախսերը և այդպիսով նպաստել ազգային էներգախնայողության ծրագրի նպատակների իրականացմանը: ԷԱ բարձրացման ներուժը շենքերի ոլորտում գնահատվել է մոտ 40%, և Հայաստանը բացառություն չէ: Հայաստանում շենքերի հիմնական մասը կառուցվել է մինչև 1990-ականները և գտնվում են ոչ բարվոք վիճակում, այսպիսով՝ հարկ է գնահատել և բարելավել շենքերի ջերմային պաշտպանության և սեյսմիկ բնութագրերը:

3. Նախագծային կազմակերպության աշխատանքների շրջանակը, հիմնական առաջադրանքները և գործողությունները

Աշխատանքների շրջանակը

Ընդհանուր առաջադրանքը ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վարչական շենքերի վերանորոգման և էներգաարդյունավետության բարձրացման նախագծերի ամբողջական փաթեթի կազմումն է:

Կազմակերպությունը պարտավոր է հաշվի առնել հետևյալ օրենսդրական, իրավական ու նորմատիվ-տեխնիկական պահանջները.

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 24.03.2014թ. թիվ 87-Ն հրաման. «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. հիմնական դրույթներ շինարարական նորմերը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարության 16.02.2006թ. թիվ 392-Ն որոշում. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի համար սոցիալական տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»:
- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ. թիվ 43-Ա հրաման. ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուն հավանություն տալու մասին»:
- ՀՀ կառավարության 25.12.2014թ. թիվ 1504-Ն որոշում. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»:

Հիմնական առաջադրանքները և գործողությունները

Մասնագիտական ծառայությունների մատուցման շրջանակներում կապալառուն պետք է իրագործի հետևյալ խնդիրները՝

1. Համապատասխան շենքի **մանրակրկիտ չափագրում**, չափագրական նախագծերի իրականացում:
2. Շենքի ԷԱ բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման նախագծերի մշակում:
3. Շենքի վերանորոգման նախագծերի իրականացում:
4. Արևային (ջրափաթակուցիչ և ֆոտովոլտային) համակարգերի տեղադրման նախագծերի իրականացում:
5. Իրականացնել «Հեղինակային հսկողություն» շինարարության փուլում, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.09.1998թ. թիվ 143 հրամանով հաստատված հրահանգի:

4. Նախագծի կազմը

Աշխատանքային նախագծի մշակում՝ ըստ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի և ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշման, հավելված 1-ի՝

1. Ընդհանուր բացատրագիր,
2. Գլխավոր հատակագիծ,
3. Հատակագծեր բոլոր մակարդակների համար, ներառյալ նկուղային և տեխնիկական հարկերը (եթե առկա է),
4. Շենքի ճակատի բոլոր հիմնական տարրերի կտրվածքների գծագրերը՝ տանիքածածկի, առաստաղի, արտաքին պատերի, դռների և պատուհանների, նկուղի հանգույցները և կարևոր միացումները,
5. Ջերմամեկուսացման շերտերի տեղադրման և ամրացման մանրամասն գծագրեր պատերի, առաստաղների, հատակի, պատուհանների և դռների հատվածներում,
6. Արտաքին պատերի և հարակից բաղադրիչների մանրամասն գծագրերը, ինչպիսիք են խողովակները, ջրահեռացման խողովակները և ջրհորդանները, կախոցները, հեռահաղորդակցության ակսեսուարները և այլն: Գծագրերը պետք է համալրվեն համապատասխան հատակագծերով, ներառելով արևային ջրափաթակուցիչ համակարգերի խողովակաշարը,
7. Կոյուղաջրերի և անձրևաջրերի ջրահեռացման միացումների կամ ջրահեռացման այլ համապատասխան լուծումների մանրամասն գծագրեր,
8. Անձրևաջրերի և կոյուղաջրերի ջրահեռացման հորիզոնական և ուղղահայաց համակարգերի գծային սխեմաները,

9. ԶԳՄՕ (ջերմագազամափակարարման և օդափոխության) համակարգերի և դրանց ջերմամեկուսացման գծերի մանրամասն գծագրեր գծային սխեմայով, ներառյալ առնչվող հատակագծային լուծումները և կտրվածքները, ,
10. Հողանցումների և շանթարգելների մանրամասն գծագրեր գծային սխեմայով,
11. Ներքին և արտաքին լուսավորության մանրամասն գծագրերը գծային սխեմայով,
12. Հրդեհաշիջման համակարգերի մանրամասն գծագրերը գծային սխեմայով,
13. Գազամափակարարման համակարգերի մանրամասն գծագրերը գծային սխեմայով,
14. Ձայնահաղորդակցության տեսահսկողության ցանցերի և սարքերի մանրամասն գծագրերը գծային սխեմայով,
15. Արևային ֆոտովոլտային համակարգերի մանրամասն գծագրերը /լուսավորության հաշվարկներն պետք է իրականացնել համապատասխան մոդելավորող ծրագրով/ էլեկտրական գծային սխեմայով,
16. Բոլոր մեխանիկական, էլեկտրական և սանտեխնիկական համակարգերի տեխնիկական նկարագրությունները (ԶԳՄՕ սարքավորումներ, խողովակաշարեր, էլեկտրական սարքավորումներ, հրդեհաշիջում),
17. Բոլոր նյութերի և սարքավորումների տեխնիկական մասնագրերը որոնք օգտագործվելու են շինարարության ընթացքում՝ մասնավորապես, էԱ բարձրացման և շենքի վերանորոգման հետ առնչվող նյութերի, սարքավորումների և շինվածքների մանրամասն բնութագիրը (ջերմամեկուսիչ նյութեր, պատուհաններ, դռներ, լուսավորության և ԶԳՄՕ համակարգեր, արևային ֆոտովոլտային և ջրափաթակուցիչ համակարգեր և այլն): Տեխնիկական մասնագրերը պետք է նաև ներառեն վերը նշված բոլոր մեխանիկական, էլեկտրական և սանտեխնիկական սարքավորումները և նյութերը, ինչպես նաև յուրաքանչյուր համակարգի, սարքավորման կամ նյութի տեղադրման/մոնտաժման աշխատանքների մանրամասն նկարագիրը,
18. Շրջակա միջավայրի պահպանման պլան,
19. Առողջապահական և անվտանգության պլան,
20. Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված ինժեներատեխնիկական միջոցառումներ,
21. Շինարարության կազմակերպում՝ շինարարության տևողության /ժամանակացույց/ հաշվարկով (քանդման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպման նախագիծ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ, հակահրդեհային անվտանգության միջոցառումներ, սակավաշարժ խմբերի համար մարտչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ, էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ):

22. Նախահաշվային փաստաթղթեր և ծավալաթերթ, պետք է ներկայացվի մանրամասն նախահաշիվ: **Նախահաշիվը պետք է ներկայացվի յուրաքանչյուր մասնաշենքի համար առանձին:**

23. Հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների, շինվածքների և կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր և մասնագրեր,

24. Բոլոր ամփոփագրերն ու մասնագրերը (քանդման աշխատանքներ, կառուցման աշխատանքներ, էլեկտրական աշխատանքներ, ջուր-կոյուղի և այլն) պետք է լինեն աղյուսակային տեսքի, որտեղ պետք է երևան ծավալները՝ բոլոր համարակալված սենքերի համար առանձին-առանձին և ընդհանուր գումարային:

Շենքի վերանորոգման նախագծում անհրաժեշտ է նախատեսել հետևյալ աշխատանքները՝

Մատչելիության ապահովում

Համաձայն «ՀՀՇՆ IV-11.07.01-2006» և «ՀՀԿՀ 23-101-2017» նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, անհրաժեշտ է շենքում ապահովել մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Տանիք

- Տանիքի առկա կոնստրուկցիայի վերանորոգում, իսկ անհնարինության դեպքում քանդում և նորի կառուցում ՀՀ շինարարական նորմերի պահանջներին համաձայն:
- Գոլորշամեկուսիչ և ջերմամեկուսիչ շերտերի պատշաճ իրականացում:
- Օդափոխության բոլոր խողովակները պետք է լինեն տանիքի ծածկից բարձր, որպեսզի համապատասխանեն գործող ստանդարտներին և նորմերին: Միահյուսված օդափոխության խողովակները պետք է ջերմամեկուսացվեն և պաշտպանվեն տանիքից վեր ձգվող մետաղյա ցինկապատ թիթեղով:

Արտաքին պատեր

- Ապամոնտաժել արտաքին պատերին ամրացված բոլոր տեսակի սարքավորումները, որոնցից են սպասարկման նպատակով մետաղյա աստիճանները, օդորակիչի մասերը, խողովակները, էլեկտրական սարքերը և այլն:
- Ջերմամեկուսացնել արտաքին պատերի մակերևույթը, հաշվի առնելով ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմերով բերված դրույթները:
- Ջերմամեկուսացման տեսակից կախված **մանրամասնորեն ներկայացնել տեխնոլոգիան, շերտերի և աշխատանքների իրականացման հերթականությունը և համապատասխան նյութերի մասնագրերը:**

Պատուհաններ և դռներ

- Հին պատուհանների ապամոնտաժում, պահեստավորում, նոր էներգաարդյունավետ պատուհանների տեղադրում ըստ էներգետիկ ուսումնասիրության արդյունքում բերված պահանջների, յուրաքանչյուր սենյակում առնվազն մեկ բարդ փականով, միջատապաշտպան ցանցով և կարգավորումով: *Առաջին հարկի պատուհանների համար նախատեսել մեքանիկական ճաղավանդակներ:*
- Ներքին պատուհանագոգերի տեղադրում, հերմետիկացում:
- Դրսից բազալտե պատուհանագոգերի տեղադրում:
- Արտաքին դռների ապամոնտաժում, նոր՝ այլումինե պրոֆիլով և ջերմափոխ միջուկով դռների տեղադրում, հերմետիկացում, կարգավորում:
- Ներքին դռների ապամոնտաժում (պահեստավորում), նոր դռների տեղադրում, հերմետիկացում, կարգավորում:

Ջեռուցման, օդափոխության և ջրամատակարարման համակարգեր

- Գոյություն ունեցող ջեռուցման համակարգի ստուգում, վերանորոգում, փորձարկում: Թուջե ջեռուցիչների փոխարինում այլումինե կամ պողպատե պանելային ջեռուցիչ մարտկոցներով՝ թերմոստատներով:
- Օդափոխության /ներածման և արտածման/ համակարգի ստուգում, վերանորոգում, նոր ներածման և արտածման համակարգի նախագծում /ամբողջական կամ մասնակի/:
- Ջրամատակարարման, կոյուղու ներքին և արտաքին ցանցերի ստուգում, ըստ անհրաժեշտության նորոգում, քանդում, նորի կառուցում՝ անհրաժեշտ փորձարկումներով:

Ներքին վերանորոգում

- Սանհանգույցների նորոգում, քանդում, նորերի կառուցում ըստ անհրաժեշտության:
- Սարքավորումների ապամոնտաժում, նորերի տեղադրում (չափսերն ընտրել ըստ տարիքային խմբերի):
- Կատարել սենյակների և միջանցքների հատակների ուսումնասիրություն:
- Կատարել միջանցքների և սենքերի պատերի, առաստաղների ուսումնասիրություն, հարդարման շերտի վերանորոգում կամ անհրաժեշտության դեպքում քանդում և նորի իրականացում վերջնական լավորակ հարդարումով:
- Հարդարման և հատակների բոլոր նյութերը պետք է լինեն էկոլոգիապես մաքուր, համապատասխանեն հրդեհային անվտանգության, սանիտարահիգիենիկ և այլ գործող պահանջներին (նյութի ընտրությունը համաձայնեցնել պատվիրատուի հետ):
- Աստիճանավանդակներում տեղադրել նոր բազրիքներ:

Էլեկտրամատակարարում և լուսավորություն

- Էլեկտրահաղորդագծերի, էլեկտրական սարքերի ուսումնասիրում, վերանորոգում, քանդում, փոխում, ավելացում, լուսատուների ապամոնտաժում, ըստ հաշվարկի փոխարինում լուսադիոդային (LED)–լուսատուներով (գունային ջերմաստիճանը $\leq 4,000$ °K), ցանցերի մաս-մաս և ընդհանուր փորձարկում:

Արևային ջրատաքացուցիչ և ֆոտովոլտային համակարգեր

- Արևային ջրատաքացուցիչ և ֆոտովոլտային համակարգերը պետք է տեղադրվեն այն վայրերում, որտեղ հասանելի է արևի լիարժեք ճառագայթում՝ բացառելով ստվերումը:
- Տեղադրումը պիտի իրականացվի այնպես, որ վնաս չպատճառի տանիքի արտաքին ջրամեկուսիչ շերտին՝ հանգեցնելով կաթոցների և անձրևաջրերի ներթափանցմանը (մասնավորապես, այն հատվածներում որտեղ տանիքածածկին ամրակցվում են մալուխները, կցոնները և խողովակները):
- Այն դեպքում, երբ արևային համակարգը պետք է տեղակայվի շենքի տանիքին, տանիքի կառուցվածքները պետք է նախագծվեն հաշվի առնելով տեղադրվող ֆոտովոլտային և/կամ ջրատաքացուցիչ համակարգերից գոյացող լրացուցիչ բեռնվածքները: Արևային համակարգերի հզորությունը, կողմնորոշումը, թեքության անկյունն ու այլ բնութագրերը պետք է համապատասխանեցնել պատվիրատուի հետ:
- Արևային ջրատաքացուցիչ համակարգերի համար պետք է նշել կարգավորիչների, պահուստային բաքի, անջատիչ փականների և այլ սարքավորումների տեղադրման մանրամասները: Ջրի խողովակաշարերի համար անհրաժեշտ բոլոր ջրամատակարարման ուղիների գծագրերը պետք ներառեն արևային կոլեկտորի, պահուստային բաքի և շենքի տաք ջրամատակարարման համակարգի մանրամասները:
- Ֆոտովոլտային համակարգերի համար պետք է ապահովել վահանակների, կցամասերի, կարկասի, անջատիչների և այլ օժանդակ սարքավորումների տեղադրման սխեման, ինչպես նաև էլեկտրամատակարարման դիագրամը:

Ծանուցում՝

Նախագծի բոլոր տեխնիկական բաղադրիչները, ինչպիսիք են պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացումը, ՋԳՄՕ, լուսավորությունը և այլն, պետք է հիմնավորված լինեն մանրամասն հաշվարկներով, որոնք պետք է տրամադրվեն Պատվիրատուին՝ ըստ պահանջի:

Էներգաարդյունավետության/էներգախնայողության հետ կապված բոլոր նյութերը, սարքավորումները և շինվածքները նախագծել առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների» խորհրդատվական ձեռնարկով, համաձայնեցնելով պատվիրատուի հետ/: Սույն ձեռնարկը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/Advisory_Handbook_on_Insulation_2013.pdf

5. Ընդհանուր դրույթներ

- Աշխատանքային նախագծերում ներառել բոլոր այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են շենքի լիարժեք հիմնանորոգման և բնականոն շահագործման համար.

ա. ներկայացնել մանրամասնորեն ուսումնասիրման արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ;

բ. նախագիծը մշակել գործող բոլոր ՀՀ շինարարական նորմերի պահանջների համաձայն;

գ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաների և այլն/ և օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները,

- Կատարողը պարտավոր է ձեռք բերել բոլոր անհրաժեշտ տեխնիկական պայմանները:
- Ներկայացնել մանրամասնորեն կատարած ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալները:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո այն համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

Համաձայն ՀՀՔՆ14.01.2008թ. N11-Ն հրամանի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման՝ նախագծի հետ ներկայացնել նաև՝

- ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացույցային գրաֆիկը (ժամանակացույցը)
- շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները:

II. Հիմնական ակնկալվող արդյունքները

Առաջադրանքի վերջնական արդյունք է հանդիսանալու ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնիվ շենքի էներգաարդյունավետության բարձրացման և վերանորոգման աշխատանքների նախագծերը՝ ներկայացված էլեկտրոնային կրիչներով (AutoCAD և PDF ձևաչափերով), և տպագիր՝ **A2** ձևաչափի, **6** օրինակից: Նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով (Excel ձևաչափով) և տպագիր՝ **A4** ձևաչափով **4** օրինակից:

Նախագծային ամբողջ փաթեթը պետք է պատրաստվի երկլեզու՝ հայերեն և ռուսերեն: Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները:

III. Մասնագիտական պահանջներ

Դիմորդ կազմակերպությունը պետք է ունենա՝

Ա. Հասարակական շենքերի նախագծման առնվազն 5 տարվա փորձ,

Բ. **Փորձառու մասնագիտական անձնակազմ**, այդ թվում՝

1. մեկ թիմի ղեկավար/համակարգող (նախագծի պատասխանատու)՝ ճարտարապետ կամ կոնստրուկտոր (առնվազն 10 տարվա աշխատանքային փորձով),
2. մեկ ավագ ճարտարապետ, առնվազն 10 տարվա աշխատանքային փորձով (որը կարող է հանդես գալ նաև որպես թիմի ղեկավար),
3. մեկ ավագ կոնստրուկտոր, առնվազն 10 տարվա աշխատանքային փորձով (որը կարող է հանդես գալ նաև որպես թիմի ղեկավար),
4. մեկ ԶԳՄՕ մասնագետ, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով,
5. մեկ ջրամատակարարման և ջրահեռացման մասնագետ, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով,
6. մեկ էլեկտրիկ-ճարտարագետ, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով,
7. մեկ նախահաշվորդ, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով:

Թիմի ղեկավար	Ավագ ճարտարապետ	Ավագ կոնստրուկտոր	ԶԳՄՕ մասնագետ	Էլեկտր. մասնագետ	Ջրամատ. Կոյուղու մասնագետ	Նախահաշվի մասնագետ
Անուն ազգանուն	Անուն ազգանուն	Անուն ազգանուն	Անուն ազգանուն	Անուն ազգանուն	Անուն ազգանուն	Անուն ազգանուն
-	-	-	-	-	-	-

IV. Նախագծերի պահանջվող կազմը

Նախագծային փաստաթղթերը կազմելիս առաջնորդվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N273-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ»-ով:

Ներկայացվող գնառաջարկը պետք է համապատասխանի ՀՀ քաղաքաշինության նախարարի 15.02.2008թ. N19-Ն հրամանով հաստատված «Քաղաքաշինական փաստաթղթերի/ծրագրային և ճարտարապետաշինարարական/մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգով» նախատեսված սահմանաչափերին:

V. Ներկայացվող փաթեթը

Դիմորդ կազմակերպությունը/ընկերությունը նշված աշխատանքների իրականացման համար հայտի փաթեթում պետք է ներկայացնի.

1. պետական գրանցման վկայականի պատճենը,
2. առաջադրվելով ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի N 1533-Ն որոշման (քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման), գործունեության իրականացման լիցենզիաների պատճեններ և ներդիրներ (01, 02, 03, 10),
3. կազմակերպության նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի/ծրագրերի նկարագրություն (ներկայացնել վերջին հինգ տարվա նմանատիպ աշխատանքների ցանկը, պատվիրատուի հասցեն և հեռախոսահամարը),
4. պահանջված աշխատակիցների կողմից ստորագրված կենսագրականները համապատասխան աշխատանքային փորձի նկարագրությամբ (ռեզյումե) և որակավորումը հաստատող փաստաթղթերը (դիպլոմի պատճեն), **ինչպես նաև N 1533-Ն որոշման համաձայն՝ ճարտարապետի և կոնստրուկտորի հավաստագրերը:**

Ուշադրություն. մրցույթում հաղթող ճանաչվելու դեպքում աշխատանքները պետք է կատարեն փաթեթում ներկայացված մասնագետները: Մասնագետի փոփոխությունը թույլատրվում է այլ համարժեք մասնագետով՝ միայն պարզվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուի պահանջով կապալառուն պարտավոր է կատարել մասնագետների փոփոխություն:

Գնառաջարկը կարելի է լրացնել այսպիսի աղյուսակով.

Նախագծի արժեքը	Հեղինակային հսկողության արժեքը	Ընդամենը
a	b	a+b

Հեղինակային հսկողության արժեքը պետք է կազմի պայմանագրի ընդհանուր արժեքի 20%-ից ոչ պակաս:

VI. Աշխատանքների կատարման ժամանակացույց

Նախագծերի փաթեթների մշակման տևողությունը 100 օրացույցային օր է:

Կապալառուն ավարտված նախագծի փաթեթը էլեկտրոնային եղանակով պատվիրատուին պետք է հանձնի պայմանագրի ստորագրման օրվանից ոչ ուշ քան 70 օրացույցային օր հետո:

Պատվիրատուն 10 օրացույցային օրվա ընթացքում կներկայացնի իր դիտողությունները, որից հետո Կապալառուն պարտավոր է իրականացնել բոլոր ուղղումներն ու փոփոխությունները և ամբողջությամբ ավարտական տեսքով վերջնական նախագծային փաթեթները նախագծի փորձաքննության դրական եզրակացությամբ հանձնել Պատվիրատուին /էլեկտրոնային և տպագիր տարբերակներով/ ոչ ուշ քան 20 օրացույցային օր հետո:

I ամիս			II ամիս			III ամիս			IV ամիս		



Նախագծման ժամանակահատված
 Պատվիրատուի դիտարկում
 Վերջնական ուղղում, տպագրություն և հանձնում

Նախագծերի տնօրինման իրավունքը պատկանում է պատվիրատուին: